

| | |
|---------------------------------------|---|
| Վարկի պայմանները | |
| Արժույթ | ՀՀ դրամ , ԱՄՆ դոլար , Եվրո |
| Տարեկան անվանական տոկոսադրույք | 18-20 տոկոս ՀՀ դրամի դեպքում 7-10 տոկոս ԱՄՆ դոլարի դեպքում 6-9 տոկոս Եվրոի դեպքում |
| Վարկի առավելագույն ժամկետ | Առավելագույնը 36 ամիս |
| Վարկի առավելագույն գումար | 2,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք ԱՄՆ դոլար |
| Վարկի տրամադրման եղանակ | Միանվագ, անկանխիկ |
| Մարման եղանակ | Անուիտետային եղանակով կամ զսպանակաձև / ամսական մարումներով |
| Վարկի նվազագույն գումար | 100,000 ՀՀ դրամ |
| Վարկի նվազագույն ժամկետ | 3 ամիս |
| Բանկի միջնորդավճարներ | |
| Վարկի սպասարկման միանվագ միջնորդավճար | Վարկի գումարի 1 տոկոսի չափով, նվազագույնը 10,000 ՀՀ դրամ |
| | Վարկի գումարի՝ հաշվից կանխիկ ստացման դեպքում - գանձվում է կանխիկացման վճար՝ վարկի գումարի 0,35% չափով |
| Ապահովվածություն | |
| Ապահովվածություն | Վարկի ապահովման միջոց է հանդիսանում ֆիզիկական և իրավաբանական առնվազն 2 անձանց երաշխավորություն, ապահովման միջոց կարող է հանդիսանալ նաև սարքավորումները, ավտոմեքենաները, ոսկյա զարդերը և ապրանքանյութական այլ առժեքները: |
| Վարկ/գրավ հարաբերակցություն | Շուկայական արժեքի առավելագույնը 50%՝ ք.Երևանում (գրավով տրամադրվող վարկերի դեպքում): |
| Տոյժեր | |
| Ժամկետանց վարկ | ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի տարեկան 12% տոկոսի հաշվարկով |
| Ժամկետանց տոկոս | ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի տարեկան 12% տոկոսի հաշվարկով |
| Վաղաժամկետ մարման տույժ | 2ի հաշվարկվում |

- 1-Հայտի ուսումնասիրման ժամկետ՝ պահանջվող փաստաթղթերի փաթեթի ներկայացումից հետո՝ մինչև 5 աշխատանքային օր:
- 2-Վարկային հայտ ներկայացնողին վարկային հայտի վերաբերյալ որոշման մասին տեղեկատվությունը տրամադրվում է որոշման կայացման օրը, իսկ վարկի տրամադրումը՝ առավելագույնը 4աշխատանքային օրվա ընթացքում:
- 3-Վարկի ոչ նպատակային օգտագործումը հայտնաբերելու դեպքում գանձվում է տուգանք վարկի սկզբնական գումարի 1-3 % չափով, նվազագույնը՝ 30.000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 60.000 ՀՀ դրամ /տուգանք գանձելու և տուգանքի չափի մասին որոշումը կայացնում է Բանկի ՎԿ/:

| | |
|---|--|
| Վարկառուի նկատմամբ պահանջներ | |
| <ul style="list-style-type: none"> Վարկառու կարող են հանդիսանալ առնվազն 6 ամիս փաստացի գործունեություն ծավալած իրավաբանական անձիք/անհատ ձեռնարկատերեր: | |
| Վարկառուի վարկային պարտության նկատմամբ պահանջներ | |
| <ul style="list-style-type: none"> Գործող ժամկետանց վարկային պարտավորությունների բացակայություն, Վերջին 3 տարիների ընթացքում դասակարգված վարկային պարտավորությունների բացակայություն: | |
| Երաշխավորին ներկայացվող պահանջները | |
| 1.Տարիքային սահմանափակում | |

Երաշխավորի տարիքը չպետք է ցածր լինի 21-ից, իսկ վարկի մարման վերջնաժամկետը սահմանվում է մինչև երաշխավորի կենսաթոշակային տարիքը:
 2.Վարկային պատմության նկատմամբ պահանջներ
 Երաշխավորը չունի ժամկետանց պարտավորություններ, վերջին երեք տարիների ընթացքում ունեցել է դրական վարկային պատմություն:

Շարժական գույք (ավտոմեքենա) գրավադրման դեպքում՝ գույքի արտադրման տարեթիվը սահմանվում է առավելագույնը 10տարի: **ԿԱՍԿՈ ապահովագրությունը պարտադիր է՝ ամեն տարի:**

| Իրավաբանական անձանց համար պահանջվող փաստաթղթերի ցանկ |
|--|
| 1. Դիմում |
| 2. Տնօրենի , բաժնետերերի անձնագրի և սոցիալական քարտի պատճենները |
| 3. Համաձայնություն “ԱԲՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ” վարկային բյուրոյից տեղեկություն ստանալու համար |
| 4. Հարցաթերթիկ փոխկապակցված անձանց բացահայտման համար |
| 5. Գույքի ապահովագրության դեպքում՝ ապահովագրական ընկերության ընտրության հարցաթերթիկ |
| 6. Արտարժույթային վարկ ստանալու դեպքում՝ հաստատում՝ արտարժույթի փոխարժեքի փոփոխման հետևանքով՝ հնարավոր անբառենյաաստ հետևանքները կրելու մասին |
| 7. Կազմակերպության կամ անհատ ձեռներեցի Պետական ռեգիստրից ստացված վկայականը |
| 8. Կազմակերպության կամ անհատ ձեռներեցի հարկային կողը |
| 9. Լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու դեպքում համապատասխան լիցենզիան |
| 10. Կազմակերպության վերջին հաստատված կանոնադրությունը |
| 11. Պետ.ռեգիստրից տեղեկանք բաժնետերերի և տնօրենի մասին |
| 12. Բաժնետերերի համաձայնությունը վարկ ստանալու վերաբերյալ, կանոնադրությամբ սահմանված խոշոր գործարք կնքելու դեպքում |
| 13. Վարձակալության պայմանագրերի կամ ձեռնարկատիրական գործունեության իրականացման վայրը հաստատող փաստաթղթերի պատճենները /առկայության դեպքում/: |
| 14. Տեղեկանք հարկային տեսչությունից բյուջեի հանդեպ ունեցած պարտավորությունների մասին |
| 15. Այլ բանկերում հաշիվներ ունենալու դեպքում՝ Տեղեկանքներ կամ քաղվածքներ վերջին 1տարվա համարիս առաջ ժամանակահատվածի համար /այլ Բանկերում հաշիվների առկայության դեպքում/: |
| 16. Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները |
| 17. Գրավի առարկայի սեփականության վկայականի պատճեն, եթե սեփականության իրավունքը ենթակա է գրանցման համապատասխան պետական մարմնում /գրավի առարկայի առկայության դեպքում/: |
| 18. Գրավատուների, նրանց ամուսինների անձնագրերի պատճենները, ինչպես նաև ամուսնության վկայականը /առկայության դեպքում/: |
| 19. Երաշխավորների անձնագրի և սոց քարտի պատճեններ, հիմնադիր փաստաթղթերի պատճեններ /եթե երաշխավորը իրավաբանական անձ է/: |

| Անհապ ձեռներեցների համար պահանջվող փաստաթղթերի ցանկ |
|---|
| 1. Դիմում |
| 2. ՀՎՀՀ պատճեն: |
| 3. Անհատ ձեռներեցի պետական գրանցման վկայականի պատճեն բոլոր ներդիրներով: |
| 4. Վարկառուի անձնագրի և սոց.քարտի պատճեն: |
| 5. Տեղեկանք Պետ. եկամուտների կոմիտեից բյուջեի հանդեպ պարտավորությունների վերաբերյալ: |
| 6. Ֆինանսական հաշվետվությունների պատճեն |
| 7. Բիզնեսի գործունեության ծավալման համար անհրաժեշտ լիցենզիաների և թույլտվությունների պատճենները /առկայության դեպքում/: |
| 8. Վարձակալության պայմանագրերի կամ ձեռնարկատիրական գործունեության իրականացման վայրը հաստատող փաստաթղթերի պատճենները /առկայության դեպքում/: |
| 9. Այլ բանկերում հաշիվներ ունենալու դեպքում՝ Տեղեկանքներ կամ քաղվածքներ վերջին 1տարվա համարիս առաջ ժամանակահատվածի համար /այլ Բանկերում հաշիվների առկայության դեպքում/: |

- 10. Գրավի առարկայի սեփականության վկայականի պատճեն, եթե սեփականության իրավունքը ենթակա է գրանցման համապատասխան պետական մարմնում /գրավի առարկայի առկայության դեպքում/:
- 11. Գրավատուների, նրանց ամուսինների անձնագրերի պատճենները, ինչպես նաև ամուսնության վկայականը /առկայության դեպքում/:
- 12. Երաշխավորների անձնագրի և սոց քարտի պատճենոր, հիմնադիր փաստաթղթերի պատճեներ /եթե երաշխավորը իրավաբանական անձ է/:

Վարկի տրամադրման դրական կամ բացասական որոշման կայացման վրա ազդող **գործոնները՝**
 վարկային պատմությունը
 վարկառուի կողմից տրամադրված տեղեկատվության իսկությունը
 համապատասխանությունը ծրագրի պահանջներին
 հաճախորդի եկամուտների և ծախսերի կազմն ու կառուցվածքը
 այլ գործոններ

Վարկը հաճախորդին տրամադրելու կամ վարկի տրամադրումը մերժելու որոշումը Բանկը կայացնում է՝ վերլուծելով հաճախորդի ներկայացված բոլոր /այդ թվում՝ վերոնշյալ/ տվյալները, գնահատելով դրանցից բխող հաճախորդի վարկունակությունը և հաճախորդի հետ կապված այլ բոլոր ռիսկերը: Հետևաբար միայն վերը նշված պայմանների առկայությունը Բանկին չի պարտավորեցնում վարկի տրամադրումը:

Տոկոսագումարի հաշվարկման կարգ

ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆՄԱՅԻՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ՎԱՐԿԻ ԱՆՎԱՆՄԱՅԻՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՅՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ Է ԿԱԶՄՈՒՄ ՎԱՐԿԻ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԸ, ՈՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է ՎԱՐԿԻ ՄՆԱՅՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ: ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է ՕՐԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔՈՎՎ՝ ՎԱՐԿԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԻ ՓԱՏԱՑԻ ՄՆԱՅՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ՝ ՎԱՐԿԻ ԱՐԺՈՒՅԹՈՎ: ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ Է ԸՆԴՈՒՆՎՈՒՄ 365 ՕՐ ՕՐԱՅՈՒՑԱՅԻՆ ՏԱՐԻՆ:

Տրամադրված վարկերի համար անվանական տոկոսադրույքի փոփոխություն չի նախատեսվում:

Արտարժույթով վարկերի մարումների չափի փոփոխություններ՝ կապված փոխարժեքի ազդեցության հետ բանկում չեն կատարվում:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԿԵՏԻՆ ԶՎՃԱՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԳՐԱՆՑՎԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ:ՁԵՐ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ԱՅԼ ՎԱՐԿԵՐ ՍՏԱՆԱԼԻՍ:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ԻՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԶԿԱՏԱՐԵԼՈՒ ՊԱՀԻՑ ԾԱԳՈՒՄ Է ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՈՆԱԳԱՆՁՈՒՄ ՏԱՐԱԾԵԼՈՒ ՊԱՀԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ . ԳՈՒՅՔԸ (տունը, մեքենան կամ այլ) ԿԱՐՈՂ Է ԱՌԳՐԱՎՎԵԼ

Գրավադրված գույքն իրացնելուց առաջացած գումարը Վարկառուի վարկային պարտավորությունները չծածկելու դեպքում , բանկը իրավասու է բռնագանձում տարածել վարկառուի այլ գույքի վրա:

